Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին

Դիմող՝ թիվ 62210814 քրեական գործով տուժողի
Ալեքսանդր Ցվերիանովի ներկայացուցիչ
Արթուր Սաքունց
Հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59
Պատասխանողներ՝ 1. ՀՀ հատուկ քննչական ծառայության
խոշտանգումների և մարդու դեմ ուղղված
հանցագործությունների քննության վարչության
պետի տեղակալ Վ. Ավետիսյան
Հասցե՝ ք. Երևան Վաղարշ Վաղարշյան 13 ա
2. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես
կարևորագույն գործերով քննության
վարչության Դատախազ Գ. Վ. Գևորգյան
ք. Երևան Վ. Սարգսյան 5

ԴԻՄՈՒՄ

ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանի 31.03.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ

2015թ. մարտի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանը քննարկելով իր վարույթում քննվող թիվ 62210814 քրեական գործով նյութերը կայացրել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում:

1. ***Գործի դատավարական նախապատմությունը***

1.1. 2012թ. նոյեմբերի 30-ին ժամը 07:30-ի սահմաններում Ալեքսանդր Ցվերիանովը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Էրեբունու բաժնի պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնյաների կողմից:
1.2. Ա. Ցվերիանովը ոստիկանության բաժանմունքում իր նկատմամբ կիրառված խոշտանգումների վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:
1.3. 2014թ. հունիսի 4-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62210814 քրեական գործը:
1.4. 2014թ. հունիսի 26-ին հարուցված քրեական գործի շրջանակներում Ալեքսանդր Ցվերիանովը ճանաչվել է տուժող:
1.5. 2014թ. հունիսի 26-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Ավետիսյանի որոշմամբ թիվ 62210814 քրեական գործով Արթուր Սաքունցը ներգրավվել է որպես Ա. Ցվերիանովի ներկայացուցիչ:
1.6. 2015թ. մարտի 31-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանի կողմից կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում, որոշումը կազմակերպությունում ստացվել է 07.04.2015թ., չնայած այն հանգամանքին, որ որոշման ծրարի վրա նշված է 03.04.2015թ.:
1.7. 2015թ. ապրիլի 10-ին իմ կողմից վարույթն իրականացնող մարմնի որոշումը բողոքարկվել է վերադասության կարգով:
1.8. 2015թ. ապրիլի 22-ին ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևորագույն գործերով քննությաան վարչության դատախազ Գ. Վ. Գևորգյանի կողմից կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում, որոշումը ստացվել է 30.04.2015թ. :

Գտնում եմ որ 31.03.2015թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանություններով և հիմնավորմամբ.

2. Ոչ պատշաճ քննություն իրականացնելու վերաբերյալ պնդումներ

2.1. 2015թ. մարտի 31-ի ՀՔԾ քննիչ Վ. Ավետիսյանի կողմից կայացվել է քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում: Կայացված որոշման ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ նախաքննության մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները կատարվել են թերություններով և վերջինիս կողմից օբեկտիվորեն չի գնահատվել գործում առկա ապացույցները:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից Ա. Ցվերիանովի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կատարված քննությունը եղել է ոչ արդյունավետ, այն չի տարվել հանցագործությունը՝ խոշտանգումների փաստը բացահայտելու և մեղավորներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Վարույթն իրականացնող մարմնի կողմից գործում եղած ապացույցներն ու ցուցմունքները գնահատվել են սուբյեկտիվ ընկալմամբ, հիմք են ընդունվել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները՝ անտեսելով խոշտանգումների ենթարկված՝ քրեական գործով տուժողի կողմից տրված ցուցմունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «1. Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ:

2. Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից:

2. Հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով օրենքով, ապացույցները գնահատում են ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ»:

Վերը նշված դրույթներից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից գործում եղած ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրներն ստուգելու միջոցով:

Ա. Ցվերիանովի նկատմամբ ոստիկանության բաժանմունքում կիրառված խոշտանգումների փաստի առթիվ հարուցված թիվ 62210814 քրեական գործի

քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվել են քննչական գործողություններ, մասնավորապես հարցաքննվել են Ա. Ցվերիանովը, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի ՔՀԲ պետ Գևորգ Հակոբյանը, ՔՀԲ պետի տեղակալ Մամիկոն Հակոբյանը, ՔՀԲ ավագ օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանը:

Ա. Ցվերիանովը իր ցուցմունքում նշել է, որ 2012թ. նոյեմբերի 30-ին ժամը 07:30-09:00-ի սահմաններում ոստիկանության Էրեբունու բաժնի ՔՀԲ օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանը, Արմեն Մկրտչյանը, ՔՀԲ պետի տեղակալ Մամիկոն Հակոբյանն ու մի ստաժոր, ում անունը չի իմացել, եկել են իր կողմից Երևան քաղաքի Նոր-Արեշի 24-րդ փողոցի 35-րդ տանը վարձակալված սենյակ, խուզարկել են իրեն ու սենյակը, բայց ոչինչ չգտնելով՝ ձեռքերին ձեռնաշղթա են գցել և տարել են ոստիկանության Էրեբունու բաժնի ՔՀԲ աշխատասենյակներից մեկը: Այնտեղ իր իրավունքները չեն բացատրել, չեն խուզարկել: Ի պատասխան ՔՀԲ պետ Գևորգ Հակոբյանի հարցի՝ հայտնել է, որ գողություններ չի կատարել: Դրանից հետո ՔՀԲ պետը, նրա տեղակալ Մամիկոն Հակոբյանը, օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանը սկսել են ձեռքերով ու ոտքերով հարվածներ հասցնել իր մարմնի տարբեր մասերին, հարկադրել են, որ խոստովանի, թե իբր գողություններ է կատարել: Իր ներբաններին հարվածել են նաև ռետինե մահակով. սպառնացել էլեկտրահարող սարքով, հայհոյել են, կտտանքների ենթարկելու սպառնալիքներ տվել, նվաստացրել են իր պատիվն ու արժանապատվությունը, սակայն հարվածների հետևանքով մարմնական վնասվածքներ չի ստացել, միայն գլխի հետնամասի և ներբանների շրջանում ուռածություն է առաջացել: Այդ ամենից հարկադրված՝ համաձայնվել է խոստովանել, թե գողությունները ինքն է կատարել:…:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից Ա. Ցվերիանովի հարցաքննությունից հետո ցուցմունքեր է վերցվել նաև ոստիկանության Էրեբունու բաժանմունքի աշխատակիցներից, ովքեր իրենց ցուցմունքերում նշել են, որ իրենք Ա. Ցվերիանովի նկամամբ վատ վերաբերմունք չեն դրսևորել, բացատրել են իրավունքերն ու պարտականությունները: Այնուհետ, նաև առերես հարցաքննությունների ժամանակ հաստատել են այդ հանգամանքը, իսկ Ա. Ցվերիանովը պնդել է իր կողմից տրված ցուցմունքը:

Վարույթն իրականացնող մարմինը ունենալով իրարամերժ ցուցմունքներ արժանահավատ է համարել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքները՝ անտեսելով Ա. Ցվերիանովի ցուցմունքները այն մասին, որ ինքը ենթարկվել է խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Նախաքննության ընթացքում Ա. Ցվերիանովը ցուցմունք է տվել այն մասին, որ 2012թ. նոյեմբերի 30-ին ժամը **07:30-09:00-ի** սահմաններում ոստիկանության Էրեբունու բաժնի ՔՀԲ օպերլիազորներ Արտավազդ Պետրոսյանը, Արմեն Մկրտչյանը, ՔՀԲ պետի տեղակալ Մամիկոն Հակոբյանն ու մի ստաժոր, ում անունը չի իմացել, եկել են իր կողմից Երևան քաղաքի Նոր Արեշի 24-րդ փողոցի 35-րդ տանը վարձակալված սենյակ, խուզարկություն կատարել, այնուհետև ոչինչ չհայտնաբերելով իրեն ձեռնաշղթաներ են գցել ու տարել են ոստիկանության Էրեբունու բաժին:

Արտավազդ Պետրոսյանն ու Արմեն Մկրտչյանը իրենց նույնաբովանդակ ցուցմունքում նշել են, որ իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները 2012թ. նոյեմբերի 30-ին ժամը **16:00-ին** Ա. Ցվերիանովին Երևան քաղաքի Նոր Արեշի 24-րդ փողոցի 35-րդ տնից բերման են ենթարկել ոստիկանության Էրեբունու բաժին….:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան միջոցառումներ չեն ձեռնարկվել Ա. Ցվերիանովի և ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքում եղած անհամապատասխանությունը պարզելու ուղղությամբ, այլ հիմք է ընդունել իր կոլեգաների կողմից տրված ցուցմունքներն այն մասին, որ Ա. Ցվերիանովը ոստիկանություն է տարվել 2012թ. նոյեմբերի 30-ին ժամը 16:00-ի սահմաններում, այնինչ Ա. Ցվերիանովը ոստիկանություն բերման է ենթարկվել առավոտյան՝ **07:30-09:00-ի** սահմաններում և ըստ վերջինիս ոստիկանության բաժնում իրեն ալկոհոլ են խմեցրել՝ հասել է հարբածության աստիճանի:

Ոստիկանության աշխատակիցների կողմից ցուցմունքներ տալու և դեպքից հետո հարցաքննվելու վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ռամսահայի գործով: Նշված գործի կայացված որոշման 326-րդ կետում դատարանը արտահայտել է հետևյալ միտքը «(…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան հարցաքննվել են միայն դեպքից մի քանի օր անց և այդ ժամանակահատվածում նրանք հնարավորություն են ունեցել պատահարը քննարկել միմյանց և այլոց հետ»:

Ռամսահայի գործով վճռի 330-րդ կետում սահմանված է. «,(…) ոստիկաններ Բրոնսը և Բալստրան դեպքից հետո չեն պահվել իրարից մեկուսի և չեն հարցաքննվել գրեթե երեք օր (…): Չնայած (…) չկա որևէ ապացույց առ այն, որ նրանք գաղտնի համաձայնության են եկել միմյանց կամ Ամստերդամի ոստիկանական ուժերի իրենց գործընկերների հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման

համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության էական թերություն[1]»:

Ինչպես Ռամսահայի գործով, սույն գործով ևս ոստիկանության աշխատակիցները հնարավորություն են ունեցել միմյանց հետ քննարկել գործի հանգամանքները և համաձայնության գալով կարող էին տալ նույնաբովանդակ ցուցմունքներ:

Իսկ վարույթն իրականացնող մարմինը արժանահավատ համարելով ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքերը, եկել է եզրակացության, որ չի հիմնավորվում Ա. Ցվերիանովի նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը և արդյունքում կայացրել է քրեական հետապնդում իրականացնելու մասին որոշում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ նշվում է. …«Նույն օրը ժամը 18:25-ին Ալեքսանդր Ցվերիանովը քննիչ Ռոբերտ Թունիայանի կողմից ձերբակալվել է: Ալեքսանդր Ցվերիանովի պաշտպանությունն իրականացնելու համար հրավիրվել է հանրային պաշտպան Անժելա Հոբոսյանը, ինչպես նաև թարգմանիչ Անահիտ Գրիգորյանը: Վերջիններիս մասնակցությամբ քննիչը տեղեկանք է կազմել այն մասին, որ Ալեքսանդր Ցվերիանովի հարցաքննությունը հետաձգվել է նրա՝ ոգելից խմիչքի ազդեցության տակ գտնվելու պատճառով»:

Այսինքն, ստացվում է այնպես, որ Ա. Ցվերիանովը, ով ոստիկանության Էրեբունու բաժին է բերման ենթարկվել առավոտյան ժամը 07:30-09:00-ի սահմաններում, երեկոյան ժամը 18:25-ի սահմաններում եղել է այնպիսի հարբածության վճակում, որ վերջինիս հետ անհնարին է եղել քննչական գործողություն կատարել և քննիչը այն հետաձգել է: Եթե նույնիսկ Ա. Ցվերիանովը ժամը 07:30-09:00-ի սահմաններում հարբած վիճակում տեղափոխվեր ոստիկանություն, ապա երեկոյան ժամը 18:25-ի

[1]. Եվրոպական դատարանի 15 մայիսի 2007 թ. գանգատ թիվ 52391/99 Ramsahai and others v. The Netherlands գործ:

սահմաններում հարբածությունը պետք է նվազեր՝ դառնար աննշան: Այն հանգամանքը, որ երեկոյան ժամը 18:25-ին Ա. Ցվիերիանովի հարցաքննությունը հետաձգվել է քանի որ վերջինս եղել է ալկոհոլի ազդեցության տակ, հիմք է տալիս համոզվելու այն բանում, որ վերջինս ակլոհոլ է օգտագործել ոստիկանության շենքում՝ ոստիկանության աշխատակիցների իմցությամբ և նրանց հյուրասիրությամբ, քանի որ գտնվելով ոստիկանության շենքում, ոստիկանության աշխատակիցների հսկողության ներքո, այլ տարբերակ անհնար է:

Եթե նույնիսկ, ընդունենք այն տարբերակը, որ Ա. Ցվերիանովը բերման է ենթարկվել, ոստիկանության աշխատակիցների կողմից նշված ժամին՝ 16:00-ի և եղել է ալկոհոլ օգտագործած վիճակում, ապա 2 ժամ 25 րոպեն, այն ժամանակահատվածը որ գտնվել է ոստիկանության աշխատակիցների հսկողության ներքո, բավականին ժամանակ էր սթափվելու համար և Ա. Ցվերիանովը կարող էր սթափվել ու հնարավոր կլիներ քննչական գործողություն կատարել վերջինիս հետ, եթե իհարկե ոստիկանությունում գտնվելու ժամանակ չի ալկոհոլ օգտագործել: Ավելին, եթե Ա. Ցվերիանովը ոստիկանության կողմից նշված ժամին է բերման ենթարկվել և ոգելից խմիչք օգտագործած վիճակում, ապա նման պայմաներում ինչպես են նրա հետ կատարվել քննչական գործողություններ՝ բնակարանի և անձնական խուզարկություն և ինչպես է ստացվել, որ դրա վերաբերյալ որևէ արձանագրության մեջ նշում չի կատարվել:

Այս հարցը, ինչպես և Ա. Ցվերիանովի ալկոհոլ օգտագործելու հանգամանքները, օգտագործման վաղեմությունը և պայմանները պարզելու ուղղությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ գործողություն չի իրականացվել, ինչն էական նշանակություն կարող էր ունենալ գործի ելքի համար:

Ա. Ցվերիանովին անձնական խուզակության ենթարկելու համար հրավիրված ենթադրյալ ընթերակաների ազգանվան դիմաց դրված ստորագրությունների վերաբերյալ նշանակված դատաձեռագրաբանական փորձաքննությունների միմյանցից տարբերվող եզրակացությունները ևս վարույթն իրականացնող մարմինը գնահատել է պաշտոնատար անձանց օգտին:

Բացի այդ, վարույթն իրականացնող մարմնի կողմից որևէ գործողություն չի իրականացվել պարզելու համար 2 տարբեր օրերի կատարված քննչական գործողություններին նույն ընթերակաների մասնակցության վերաբերյալ, ավելին ընթերակաների անվան դիմաց դրված ստորագրությունների պատկանելության վերաբերյալ նշանակված փորձաքննության եզրակացությունը գնահատվել է սուբյեկտիվ ընկալմամբ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չիրականացնելու մասին է ապացուցում նաև այն հանգամանքը, որ 16 դրվագով գողություն կատարելու մեջ մեղադրվող անձը, դատարանի դատավճռով ճանաչվում և հռչակվում է անմեղ՝ ապացույցների անբավարարության հիմքով, սակայն պաշտոնական լիազորություններն անցնելու հանցակազմով հարուցված քրեական գործի քննության ընթացքում, որևէ պաշտոնատար անձի գործողություններում հանցակազմի տարրեր չեն հայնաբերվում:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը գալիս ենք եզրահանգման, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալի կողմից իրականացված քննությունը չի եղել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ, մասնավորապես քննիչի գործողությունները ուղղված չեն եղել Ա. Ցվերիանովին խոշտանգելու հանգամանքերը պարզելուն: Մի քանի ամիս տևած նախաքննությունն ավարտվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, որը սակայն պատշաճ կերպով պատճառաբանված և հիմնավորված չէ, նրանում միայն նշվում են ցուցմունքների բովանդակությունը և եզրահանգումն այն մասին, որ գործում եղած փաստական տվյալները բավարար չեն եղել պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

Քրեական գործի նախնական քննության ընթացքում Ա. Ցվերյանովը ցուցմունքեր է տվել այն մասին, որ ոստիկանությունում գտնվելու ժամանակ իր նկատմամբ բռնություններ են կիրառվել, սակայն վարույթն իրականացնող մարմնը որևէ փորձաքննություն չի նշանակել պարզելու վերջինիս նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեբանական բռնությունների փաստը:

Այնինչ, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածը մեկնաբանել է ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքների լույսի ներքո: Ի տարբերություն Կոնվենցիայում ամրագրված այլ հիմնական դրույթների, 3-րդ հոդվածը որևէ բացառություն չի նախատեսում և 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որևէ շեղում անթույլատրելի է, նույնիսկ ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրության ժամանակ[2]: Դատարանը հաստատել է, որ նույնիսկ ամենաբարդ հանգամանքներում, ինչպիսին է ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ անթույլատրելի է համարում խոշտանգումն ու անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ մեղադրվող անձի վարքագծից[3]:

---

[2]. տես՝ <<Selmouni ընդդեմ Ֆրանսիայի>> գործով [GC] վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 95, ECHR 1999-V, 7, և վերոհիշյալ Լաբիտայի գործը, կետ 119:

[3]. տես՝ <<Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության>> գործով 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, կետ 79, Զեկույցներ of Judgments and Decisions 1996-V, և վերոհիշյալ Լաբիտայի գործը, կետ 119:

Դիմողի կողմից կատարված ենթադրյալ հանցանքի բնույթը 3-րդ հոդվածի իմաստով որևէ դեր չի կատարում[4]:

Վատ վերաբերմունքը 3-րդ հոդվածի կարգավորման շրջանակում դիտարկելու համար այն պետք է լինի ծանրության որոշակի նվազագույն աստիճանի: Այդ նվազագույն աստիճանի առկայության գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ **անօրինական վերաբերմունքի տևողությունը**, **ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները** և **տուժածի առողջական վիճակը**, այնպես էլ դրա ենթատեքստը, ինչպիսին է, օրինակ, **չափազանց լարված ու հուզական մթնոլորտը**[5]:

Եվրոպական Դատարանը վերաբերմունքը որակում է որպես «անմարդկային», քանի որ, inter alia, այն կանխամտածված էր, տևել էր մի քանի ժամ և պատճառել էր իրական մարմնական վնասվածքներ և **ծանր ֆիզիկական ու հոգեկան տառապանքներ**: Վերաբերմունքը համարվում է «նվաստացնող», երբ դրա արդյունքում տուժածի մոտ առաջանում է **վախի, տագնապի և թերարժեքության զգացում**, և տուժածին վիրավորելու ու նսեմացնելու արդյունքում **կոտրում է նրա ֆիզիկական ու հոգեկան կամքը**, կամ երբ այն ստիպում է տուժածին գործելու իր կամքին **կամ խղճին հակառակ**[6]:

Սույն պարագայում նախաքննությունն իրականացնող մարմինը պարտավոր էր համաձայն նշված նախադեպի նշանակել համապատասխան հոգեբանական-հոգեբուժական փորցաքննություններ, որոնք ունակ կլինեին պարզելու թե՝ Ա. Ցվերյանովի մոտ առկա է արդյոք՝ **վախի, տագնապի և թերարժեքության զգացում, կոտրված է արդյոք նրաց ֆիզիկական ու հոգեբանական կամքը:**

3. Խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտման վերաբերյալ պնդումներ.

Մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:...»:

ՀՀ քրեական դատավարության 11-րդ 7-րդ մասին համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական

[4]. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 13-րդ կետը (գանգատ թիվ 22978/05)
[5]. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 14-րդ կետը (գանգատ թիվ 22978/05)
[6]. Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործով 15-րդ կետը (գանգատ թիվ 22978/05)

օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից Ա. Ցվերիանովից ինքնախոստովանական ցուցմունքներ են կորզվել սպառնալինքրի և ֆիզիկական բռնությունների, ալկոհոլ հյուրասիրելու ազդեցությամբ, որոնք հետագայում օգտագործվել են իր դեմ: Գողություններ կատարելու փաստով հարուցված քրեական գործով դատական քննության արդյունքում Ա. Ցվերիանովը արդարացվել է՝ ապացույցների անբավարարության հիմքով:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված խոշտանգումների արգելքը բացարձակ իրավունք է, այն որևէ պարագայում չի կարող խախտվել կամ սահմանափակվել: Ինչը սակայն սույն դեպքում չի պահպանվել, ավելին խոշտանգումների և դաժան անմարդկային վերաբերմունքի ազդեցությամբ կորզված ցուցմունքերը որպես ապացույց օգտագործվել են Ա. Ցվերիանովի դեմ հարուցված քրեական գործում:

Խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը՝ անկախ հանգամանքներից և դիմողի վարվելակերպից բացարձակ իրավունք լինելու վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել մարդու իրավունքերի եվրոպական դատարանը: Այսպես, Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով (գանգատ թիվ 26772/95), դատարանը նշում է նույնիսկ խիստ բարդ հանգամանքների պայմաններում, ինչպես օրինակ ահաբեկչության կամ հանցագործության դեմ պայքարը, Կոնվենցիան բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը (պարբ. 199, ՄԻԵԴ 2000-IV):

Համաձայն՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (1984) 1-ին հոդվածի, Կոնվենցիայի իմաստով խոշտանգում նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով սուր ցավ կամ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է պատճառվում անձին՝ նպատակ ունենալով նրանից կամ երրորդ անձից ստանալ տեղեկություններ կամ խոստովանություն, նրան պատժել կամ որևէ երրորդ անձի կատարած գործողությունների կամ այնպիսի գործողությունների համար, որոնց կատարման մեջ նա կասկածվում է, կամ սպառնալ կամ հարկադրել նրան կամ որևէ երրորդ անձի, կամ որևէ տեսակի խտրականության վրա հիմնված որևիցե պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնական իրավասություններ կատարող այլ անձի կողմից,

նրա հրահրությամբ, կամ նրա համաձայնությամբ կամ համակարծությամբ: Չի ներառում այն ցավը կամ տառապանքը, որը բացառապես բխում է օրինական պատիժներից, հարիր կամ անբաժանելի է դրանցից:

Սույն դեպքում ոստիկանության աշխատակիցները նպատակ ունենալով ինքնախոստովանական ցուցմունքներ կորզել Ա. Ցվերիանովից, նրան ենթարկել են խոշտանգման, օգելից խմիչք են տվել, այնուհետև ստիպել են ինքնախոստովանական ցուցմունքեր տալ՝ խախտելով վերջինիս վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, այնուհետ հարուցված վարույթի ընթացքում հիմք են ընդունվել ոստիկանության աշխատակիցների կողմից տրված ցուցմունքերը, որի արդյունքում էլ չի հաստատվել իրավունքի խախտման փաստը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը գալիս ենք եզրահանգման, որ ոստիկանության աշխատակիցների կողմից խախտվել է Ա. Ցվերիանովի խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը: Ավելին, Կոնվենցիայով արգելված իրավունքի խախտման շուրջ չի իրականացվել գործուն և արդյունավետ քննություն, այն չի եղել բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ, կատարված քննությունը չի տարվել իրավունքի խախտման փաստը հաստատելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի դրույթներով.

խնդրում եմ

պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին վերացնել Ալեքսանդր Ցվերիանովի իրավունքերի և ազատությունների խախտումը:

Կից ներկայացնում եմ.

1. 31.03.2015թ. քրեական հետապնում չիրականացնելու և քերական գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճենը,
2. 10.04.2015թ. ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված դիմումի պատճենը,
3. 22.04.2015թ. բողոքը մերժելու մասին որոշման և այն ստանալու ծրարի պատճենը:

Դիմող՝ Արթուր Սաքունց

29.05.2015ج.